Մամուլի հաղորդագրություն

2019 թվականի նոյեմբերի 25-ից 29-ը աշխարհում մեկնարկում է դեղերի անվտանգության շաբաթը: Տարբեր երկրների դեղերի շրջանառությունը կարգավորող կառույցներ մասնակցում են տեղեկատվական մեդիաարշավին՝ դեղերի կողմնակի ազդեցությունների և դրանց մասին կարգավորող մարմիններին հաղորդելու կարևորության վերաբերյալ իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով: Այս տարվա արշավի թիրախն է բազմադեղաբուժությունը, այն կարգախոսով, որ կողմնակի ազդեցության դեպքերը հաղորդելը նպաստում է միաժամանակ տարբեր դեղեր կիրառող պացիենտների անվտանգության ապահովմանը:

Դեղերի անվտանգության շաբաթին (#MedSafetyWeek), որը նախաձեռնել է ԱՀԿ դեղերի անվտանգության դիտարկման կենտրոնը՝ համագործակցելով Եվրոպայի դեղերի գործակալությունների ղեկավարների (HMA) և դեղակարգավորող կառույցների միջազգային կոալիցիայի (ICMRA) հետ միացել են աշխարհի 57 երկրներ, այդ թվում Հայաստանը:

Բազմադեղաբուժություն է դիտարկվում միաժամանակ չորս և ավելի դեղերի զուգահեռ կիրառումը: Բազմադեղաբուժության արդյունքում բարձրանում է կողմնակի ազդեցությունների դրսևորման հավանականությունը՝ դեղ-դեղ, դեղ-սնունդ, դեղ-բուսական ծագման պատրաստուկ փոխազդեցության մեծ ռիսկերի հետևանքով:

Չնայած բազմադեղաբուժությունը առավել տարածված է տարեցների շրջանում, այնուամենայնիվ ցանկացած անձ, ով միաժամանակ կիրառում է բազմաթիվ դեղեր, կարող է կրել բազմադեղաբուժության հետևանքները, օր.՝ քրոնիկական հիվանդությունների ժամանակ երկարատև և տարբեր դեղեր կիրառող անձիք:

Հետազոտությունները ցույց են տվել, որ 75 տարեկանից բարձր անձանց 30%-ը կիրառում են 6 և ավելի դեղ, իսկ աշխարհում շուրջ 1 միլիոն մարդ օրական կիրառում է 8 և ավելի դեղ:

Դեղերի անվտանգության մշտադիտարկումը Հայաստանում իրականացնում է ՀՀ ԱՆ ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոնը (Կենտրոն), որի գործունեության նպատակը Հայաստանի Հանրապետությունում անվտանգ, արդյունավետ, որակյալ դեղերի մատչելիության ապահովմանն ուղղված Առողջապահության նախարարության դեղային քաղաքականության իրագործումն է: Ի թիվս այլ կարգավորիչ գործառույթների, Կենտրոնն իրականացնում է նաև դեղերի կողմնակի երևույթների, արդյունավետության բացակայության կամ կեղծման կասկածելի դեպքերի հավաքագրում և գնահատում՝ դեղազգոնության համակարգի շրջանակներում, հանդիսանալով համանուն միջազգային ծրագրի լիիրավ անդամ: Հավաքագրված տվյալները օգնում են բացահայտել դեղերի անվտանգությանը վերաբերող խնդիրները և ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ՝ նպաստելով հանրային առողջության պահպանմանը և դեղաբուժության շրջանակներում պացիենտի անվտանգության ապահովմանը:

Ավելին իմանալու համար այցելեք Կենտրոնի պաշտոնական կայք՝ **www.pharm.am** և ֆեյսբուքյան էջ՝ **www.facebook.com/ScientificCentreOfDrugExpertise/**

22 նոյեմբերի 2019 թվական